ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 790-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՆԵՐՔԻՆ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0120-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.04.2015 թվականի թիվ 412-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Արտաշես Նվերի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին տափ թաղամաս, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0120-0014 կադաստրային ծածկագրով 0.11166 հա մակերեսով այլ հողեր

գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին տափ թաղամաս, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0120-0014 կադաստրային ծածկագրով 0.11166 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 51.87 քմ արտաքին և 34.22 քմ ներքին մակերեսով նկուղը (կառուցված՝ 2012 թվականին), 125.49 քմ արտաքին և 97.74 քմ ներքին մակերեսով բնակելի տունը (կառուցված՝ 2012 թվականին), 125.49 քմ արտաքին և 99.62 քմ ներքին մակերեսով բնակելի տունը (կառուցված՝ 2016 թվականին), 7.39 քմ մակերեսով աստիճանահարթակը (կառուցված՝ 2012 թվականին) ճանաչել օրինական որպես Մարտունի համայնքի սեփականություն:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2023K698AT):
5. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Արտաշես Նվերի Հակոբյանին (ծնված՝ 30.09.1989 թվականին) օրինականացված կառույցները և 0.11166 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:
6. Հողամասին և նրա վրա կառուցված շինությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին տափ թաղամաս, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 9 հասցեն:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով:
8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. ապրիլի 22

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 792-Ա

ՎԱՆՈՒՇ ԳՆԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 34-րդ հոդվածի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1] հոդվածի, 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ս. Հակոբյանի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 56/1739 գրությունը, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի ՀՈԲ-ի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ. Ավետիսյանի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի կազմած արձանագրությունը, Մարտունի քաղաքի բնակիչ Վանուշ Գնելի Մարգարյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ապօրինի շինություն կառուցելու մասին՝ ***որոշում եմ.***

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով արձանագրված վարչական իրավախախտման համար Վանուշ Մարգարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և լսումների օր նշանակել 2024 թվականի մայիսի 2-ին, ժամը 15:00-ին Մարտունու համայնքապետարանում (հասցեն՝ ք.Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):
2. Վարույթի իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
3. Սույն որոշման մասին ծանուցել Վանուշ Մարգարյանին (հասցե՝ քաղաք Մարտունի, Չարենցի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 22
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 793-Ա

«ԱՍՏՂԻԿ ՄՀԼԱՄՅԱՆ» ԱՁ-ԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 16/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի N 262-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Աստղիկ Միլամյան» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց, թիվ 16/7 հասցեում գործող առևտրի կետում 1 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2024 թվականի համար (թույլտվությունը կցվում է):

2.«Աստղիկ Միլամյան» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 9000 (ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 22
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 794-Ա

ՀԱՄԼԵՏ ԴԱԼԱԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի թիվ 262-Ն որոշումը և Համլետ Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համլետ Պետրոսյանին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, Կամո Շահինյան փողոց, թիվ 26 հասցեում ավտոտնակի և ամառային խոհանոցի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Համլետ Պետրոսյանին՝ համայնքապետարանի 900145115060 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Կառուցապատողին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Համլետ Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. ապրիլի 22
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 795-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 84 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՄԻԼԱՄՅԱՆԻՆ 27.06.2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 138 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի եզրակացությունը, Արթուր Միլամյանի դիմումը և հաշվի առնելով, որ Արթուր Միլամյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաքի, Սայաթ-Նովա փողոց, թիվ 84 հասցեում Արթուր Միլամյանին 27.06.2023 թվականին տրված թիվ 138 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել հինգ ամսով՝ մինչև 22.09.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 22
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2024 թվականի N 796-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԱԹԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ 26.06.2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 137 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի եզրակացությունը, Սաթիկ Մանուկյանի դիմումը և հաշվի առնելով, որ Սաթիկ Մանուկյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Թումանյան փողոց, թիվ 5/2 հասցեում Սաթիկ Մանուկյանին 26.06.2023 թվականին տրված թիվ 137 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 5 ամսով՝ մինչև 22.09.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. ապրիլի 22

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 797-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 86 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-0138-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,2021 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 86 հասցեում գտնվող 05-085-0138-0008 կադաստրային ծածկագրով 0,2021 հա մակերեսով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝

0.1687 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 86 հասցեն,

0.0334 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 86/2 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 23
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 798-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի №759-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայր, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ Կարեն Նորիկի Արուճյանի և Ինգա Նորիկի Արուճյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» № 759-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1.1 որոշման 1-ին կետում «(կառուցված՝ 1995 թվականին)» բառերը փոխարինել «(կառուցված՝ 1988 թվականին)» բառերով,
   1.2 որոշման 2-րդ կետի «(կառուցված՝ 2020 թվականին)» բոլոր երեք բառերը փոխարինել «(կառուցված՝ 2021 թվականին)» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 23
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 799-Ա

«ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ» ԱՁ-ԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա ԹԱՂԱՄԱՍ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 18/3 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի N 262-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Անդրանիկ Սողոմոնյան Վաղարշակի» ԱՁ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր, Ա թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 18/3 հասցեում գործող 26 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2024 թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):

2.«Անդրանիկ Սողոմոնյան Վաղարշակի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145108065 հաշվի համարին վճարել 24000 (քսանչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. ապրիլի 23

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի №800-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0165-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 29.03.2024 թվականի N33-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Լևիկ Ազատի Փինաչյանի 16.04.2024 թվականի №2606-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 6-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող, Լևիկ Ազատի Փինաչյանին (ծնված՝ 05.01.1949 թվականին), Աստղիկ Վահրիճի Փինաչյանին (ծնված՝ 10.01.1953 թվականին), Նաթելա Լևիկի Փինաչյանին (ծնված՝ 02.07.1976 թվականին), Նաիրա Լևիկի Փինաչյանին (ծնված՝ 06.01.1979 թվականին) և Մխիթար Լևիկի Փինաչյանին (ծնված՝ 28.01.1984 թվականին) ընդհանուր

համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-066-0165-0005 կադաստրային ծածկագրով 0.12182 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 61.6 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 44.09 քմ, կառուցված՝ 2013 թվականին), 3.02 քմ մակերեսով աստիճանները (կառուցված՝ 2013 թվականին), 120.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 88.94 քմ, կառուցված՝ 2014 թվականին), 82.63 քմ ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակ-հացատուն-անասնաշենքը (ներքին մակերեսը՝ 63.71 քմ, կառուցված՝ 2015 թվականին) և 15.42 քմ մակերեսով աստիճանահարթակը (կառուցված՝ 2014 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

նկուղի համար՝ 61.6x10000x0.1028=63325 (վաթսուներեք հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ.

աստիճանների համար՝ 3.02x10000x0.1028=3105 (երեք հազար հարյուր հինգ) ՀՀ դրամ.

բնակելի տան համար՝ 120.0x10000x0.1028=123360 (հարյուր քսաներեք հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ.

ավտոտնակ-հացատուն-անասնաշենքի համար՝ 82.63x6000x0.1028=50966 (հիսուն հազար ինը հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ.

աստիճանահարթակի համար՝ 15.42x10000x0.1028=15852 (տասնհինգ հազար ութ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 256608 (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (հաշվառման տվյալների ծածկագիրն է՝ 2023KLTAWC):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դուրան թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 5 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 23
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 801-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 97-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԻԿ ԺԴԱՆՈՎԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 06.04.2006 թվականի թիվ 538-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Աստղաձոր համայնքի ավագանու 30.09.2011 թվականի թիվ 13 որոշումը, Լեռնիկ Ղազարյանի դիմումը, համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Փիրուզա Արշակյանի 23.04.2024 թվականի թիվ 04 եզրակացությունը, հողամասը վիճակահանությամբ սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին վիճակահանության հանձնաժողովի 17.05.2002 թվականի թիվ 168 արձանագրությունը, նկատի ունենալով, որ 05-013-0133-0010 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասը տրամադրվել է Լեռնիկ Ժդանովի Ղազարյանին անհատույց, սակայն չի ներկայացվել իրավունքի պետական գրանցման՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 97-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող 05-013-0133-0010 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.1243 հա բնակելի կառուցապատման հողամասը նվիրատվությամբ հատկացնել Աստղաձոր բնակավայրի բնակիչ Լեռնիկ Ժդանովի Ղազարյանին (ծնված՝ 26.05.1972 թվականին):
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե հողամասի օտարման պետական գրանցում կատարելու համար:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին համայնքի հողային հաշվեկշռում կատարելու համապատասխան փոփոխություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 23

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 802-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 73 ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԼՈՒՍՎԱՐԴ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԴԱԼԱՔՅԱՆԻՆ 22.04.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 02 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավար Մխիթար Ալեքսանյանի եզրակացությունը, Լուսվարդ Դալաքյանի դիմումը և հաշվի առնելով, որ Լուսվարդ Դալաքյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, 73 փողոց, թիվ 3 հասցեում Լուսվարդ Դալաքյանին 22.04.2021 թվականին տրված թիվ 02 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել վեց ամսով՝ մինչև 23.10.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 23
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 803-Ա

ՎԱՀԱՆ ՌԱՖԻԿԻ ԳԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 34-րդ հոդվածի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1] հոդվածի, 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ս. Հակոբյանի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 56/1739 գրությունը, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի ՀՈԲ-ի տեսուչ, ոստիկանության կապիտան Հ. Ավետիսյանի կողմից 2024 թվականի ապրիլի 19-ի կազմած արձանագրությունը, Վահան Ռաֆիկի Գալոյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ապօրինի շինություն կառուցելու մասին՝ ***որոշում եմ.***

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով արձանագրված վարչական իրավախախտման համար Վահան Գալոյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և լսումների օր նշանակել 2024 թվականի մայիսի 3-ին, ժամը 15:00-ին Մարտունու համայնքապետարանում (հասցեն՝ ք.Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):
2. Վարույթի իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
3. Սույն որոշման մասին ծանուցել Վահան Գալոյանին (հասցե՝ Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 24):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 804-Ա

«ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍՈՒՎԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ» ԱՁ-ԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի N 262-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Համբարձում Սուվարյան Արտավազդի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վաղաշեն բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 25 հասցեում գործող 25 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Համբարձում Սուվարյան Արտավազդի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145112067 հաշվի համարին վճարել 22.000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 805-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 24 ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1/4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՊԵՏՐՈՍ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ 21.12.2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 175 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի վարչական ղեկավար Արարատ Ավետիսյանի եզրակացությունը, Պետրոս Պողոսյանի դիմումը և հաշվի առնելով, որ Պետրոս Պողոսյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 24 փողոց, թիվ 1/4/1 հասցեում Պետրոս Պողոսյանին 21.12.2021 թվականին տրված թիվ 175 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 40 օրով՝ մինչև 04.07.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 806-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 121/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-034-0146-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Հրանտ Սուրենի Գալստյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 121/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-034-0146-0001 կադաստրային ծածկագրով 0.0233 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 233,0 քմ արտաքին մակերեսով բաղնիքը (ներքին մակերեսը՝ 181,69 քմ, կառուցված՝ 1968 թվականին) և 132.64 քմ

արտաքին մակերեսով բաղնիքը (ներքին մակերեսը՝ 99,52 քմ, կառուցված՝ 2008 թվականին) ճանաչել օրինական որպես Մարտունի համայնքի սեփականություն:

2. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
3. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2023QGDBMK):
4. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Հրատն Սուրենի Գալստյանին (ծնված՝ 25.08.1963 թվականին) օրինականացված կառույցները և 0.0233 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:
5. Հողամասին և նրա վրա կառուցված շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 121/1 հասցեն:
6. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 807-Ա

«ՀԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի թիվ 262-Ն որոշումը և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ՀԷՑ» ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դուրան/Տափ թաղամաս, 15-րդ փողոց, թիվ 11 հասցեում Աիդա Գրիգորյանին պատկանող տարածքի 0,22 ԿՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 808-Ա

ԷԴԳԱՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի թիվ 262-Ն որոշումը և Էդգար Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էդգար Սարգսյանին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Զորագյուղ բնակավայր, 30-րդ փողոց, թիվ 1/1 հասցեում նոր կառուցվող բնակելի տան շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Էդգար Սարգսյանին՝ համայնքապետարանի 900145104064 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Կառուցապատողին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 809-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ, 21-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՍԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 157 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանին Մարտունի համայնք, Երանոս բնակավայրի 12-րդ, 21-րդ փողոցների, սարի ճանապարհից մինչև համալիր կոչվող տարածքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքների համար 2022 թվականի սեպտեմբերի 19-ին տրված թիվ 157 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 30 օրով մինչև 26.05.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի №810-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 2.1-7) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի №13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-7) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի հունիսի 4-ին, ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 811-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 217 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանին Մարտունի համայնք, Ծակքար բնակավայրի 8-րդ փողոցի խմելու ջրագծի կառուցման աշխատանքների համար 2023 թվականի օգոստոսի 14-ին տրված թիվ 217 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 30 օրով մինչև 26.05.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 812-Ա

«ՆԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԻՊԱՐԻՏԻ» ԱՁ-ԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, Գ. ԶԻՐՈՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՆՆԴԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի N 262-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Նանա Բաղդասարյան Լիպարիտի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Գ. Զիրոյան փողոց, թիվ 3 հասցեում գործող 26 քմ մակերեսով սննդի կետում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):

2.«Նանա Բաղդասարյան Լիպարիտի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 9000 (ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 813-Ա

«ՆԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԻՊԱՐԻՏԻ» ԱՁ-ԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, Գ. ԶԻՐՈՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՆՆԴԻ ԿԵՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 21.12.2023 թվականի N 262-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Նանա Բաղդասարյան Լիպարիտի» ԱՁ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Գ. Զիրոյան փողոց, թիվ 3 հասցեում գործող 26 քմ մակերեսով սննդի կետում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):

2.«Նանա Բաղդասարյան Լիպարիտի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 8000 (ութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 814-Ա

«ԴԵԿՈՐԱ - ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 26/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի թիվ 241-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. «Դեկորա - Գրուպ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց, թիվ 26/6 հասցեում գործող առևտրի կետում 24 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2023 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Դեկորա - Գրուպ» ՍՊԸ-ի տնօրինությանը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 36000 (երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Մարտունի